Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-358-03.10.2013-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց, հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրության սկզբունքները, կարգավորվում են նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգևատրման, դրամական օգնության կազմակերպման և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող հետևյալ անձանց վրա՝

ա. քաղաքական պաշտոն զբաղեցնող,

բ. հայեցողական պաշտոն զբաղեցնող,

գ. քաղաքացիական պաշտոն զբաղեցնող, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների,

դ. պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողները) կազմի և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների.

2) հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողներ:

2. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմինների աշխատակազմերում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ընդ որում, սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դեպքում և ժամանակահատվածում կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի կենտրոնական ապարատում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը կրկնապատկվում են:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանում է համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը:

4. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի և այդ աշխատողների թվի արտադրյալով:

5. Համապետական, Երևանի ավագանու, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի նոր կամ լրացուցիչ ընտրությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների դեպքում ընտրությունների անցկացման ժամանակահատվածի (60 օր) համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը, հանձնաժողովի քարտուղարը վարձատրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնային դրույքաչափի, իսկ հանձնաժողովի անդամները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության 50 տոկոսի չափով: Մյուս ընտրությունների դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը վարձատրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության չափով:

6. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն ընտրությունների ժամանակահատվածում վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի կրկնապատիկի, հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի անդամները՝ նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի նախագահի տեղակալը և հանձնաժողովի անդամները վարձատրվում են ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո:

7. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողները) զինծառայողներին տրվում է ամսական վարձատրություն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **հիմնական աշխատավարձ** (այսուհետ նաև՝ պաշտոնային դրույքաչափ)՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված բազային աշխատավարձի և սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված գործակցի արտադրյալ.

2) **լրացուցիչ աշխատավարձ**՝ աշխատավարձի փոփոխական մաս, որը հաշվարկվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ և, որի վճարումը պայմանավորված է սույն կետի «ա» և «բ» ենթակետերում թվարկված որևէ պայմանի և(կամ) պայմանների առկայությամբ *և ներառում է*՝

ա. **հավելում**՝ սույն ենթակետում նշված պայմաններից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի, այն է՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու, աշխարհագրական միջավայրի, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվելու համար, զինվորական, քրեակատարողական և փրկարար ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում,

բ. **հավելավճար**՝ սույն ենթակետում նշված պայմաններից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի, այն է՝ դասային, դիվանագիտական աստիճանների, տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու, կոչումների, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի, օտար լեզուների իմացության համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում.

3) **պարգևատրում**՝ միանվագ վճար, որը պետական պաշտոն զբաղեցնող անձին տրվում է ծառայողական գործունեության գնահատման և(կամ) հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքների կատարման համար.

4) **բազային աշխատավարձ**՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի որոշման համար հիմք հանդիսացող միավոր.

5) **գործակից**՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի չափը որոշելու համար բազային աշխատավարձն այդ թվով բազմապատկելու համար սահմանված մեծություն.

6) **միևնույն պաշտոն**՝ պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված նույն ենթախմբի պաշտոններ.

*7) **դրամական օգնություն***՝ սույն օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված վճար.

Հոդված 4. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքները

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներն են՝

1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական, արդարացի համակարգի և պետական պաշտոններ զբաղեցնող անձանց պարտականություններին, պատասխանատվությանը համապատասխանող հիմնական աշխատավարձի ապահովումը.
2) պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի հիմնավորված տարբերակման ապահովումը.
3) պետական ծառայության տարբեր ոլորտներում աշխատավարձերի սանդղակների համադրելիության ապահովումը.
4) հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հիմնավորված հարաբերակցությունների ապահովումը.
5) համարժեք աշխատանքի և փորձառության համար համարժեք վարձատրությունը.
6) ծառայության ընթացքում պետական ծառայողների ավելի բարձր պաշտոններ զբաղեցնելու ձգտման խթանումը.
7) ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից կախված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության խտրականության բացառումը:

ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոդված 5. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձը

1.Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի ութսուն տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի հարյուր քսան տոկոսը:

3. Բազային աշխատավարձը տվյալ տարվա համար չի կարող սահմանվել նախորդ տարվա բազային աշխատավարձից ավելի ցածր:

4. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության չափերի փոփոխությունն իրականացվում է բազային աշխատավարձի և(կամ) գործակիցների փոփոխության միջոցով՝ ըստ մասնագիտությունների և տարածքների աշխատանքի շուկայի վերլուծության հիման վրա, որն իրականացվում է երեք տարին մեկ անգամ, և որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված վերլուծության արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է առանձին մասնագիտությունների համար հիմնական աշխատավարձի չափը սահմանել՝ հիմք ընդունելով բազային աշխատավարձի և գործակցի մեծության մինչև 10 տոկոսը գերազանցող չափի արտադրյալը:

Հոդված 6. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի կառուցվածքը

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է սույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումը կիրառելիս արտաժամյա և գիշերային աշխատանքների համար տրվող հավելումները հաշվարկվում են ֆինանսական տարվա

կտրվածքով՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց տարեկան հիմնական աշխատավարձի նկատմամբ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լրացուցիչ աշխատավարձի հաշվարկում չեն ներառվում աշխարհագրական միջավայրի համար տրվող հավելումները:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների նկատմամբ:

6. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց պարգևատրումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից յուրաքանչյուրից պարգևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել տվյալ մարմնի աշխատավարձի տարեկան ֆոնդի 30 տոկոսը:

Հոդված 7. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճարները և դրանց հաշվարկման կարգը

1. Դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման (այդ թվում՝ դասային և հատուկ), ինչպես նաև սույն օրենքով սահմանված դեպքերում՝ օտար լեզուների իմացության, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի համար, պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում են հավելավճարներ:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց շնորհված դասային, դիվանագիտական աստիճանների և կոչման համար հավելավճարները սահմանվում են պաշտոնային դրույքաչափի նկատմամբ: Տվյալ մարմնում ամենացածր դասային կամ դիվանագիտական աստիճանի կամ կոչման համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի երեք տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային կամ դիվանագիտական աստիճանի կամ կոչման համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Կոչման համար հավելավճարը տրվում է միայն հարկային և մաքսային ծառայողներին, ընդ որում հավելավճարը տրվում է միայն առավել բարձր հավելավճար նախատեսող կոչման համար:

4. Քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղաքացիական ծառայողին տրվում է հավելավճար նրա պաշտոնային դրույքաչափի հինգ տոկոսի չափով:

5. Դասային, դիվանագիտական աստիճանների կամ կոչման համար հավելավճարները տրվում են բացառապես տվյալ մարմնում աշխատելու ժամանակահատվածում:

6. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելավճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

Հոդված 8. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվող հավելումները և դրանց չափը

1. Բարձրլեռնային, սահմանամերձ վայրերում, ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու դեպքերում պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներչեն տրվում:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվելու համար պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

5. Բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության

պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, պետական պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 3

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 9. Բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի N 1 հավելվածով:

Հոդված 10. Բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրությունը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հայեցողական, քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի N 2 հավելվածով:

Հոդված 11. Ազգային ժողովի պատգամավորի փոխհատուցման վճարները

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը սահմանել յուրաքանչյուր պատգամավորի համար ամսական 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով:

Հոդված 12. Սահմանադրական դատարանի նախագահի և անդամների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ սահմանվող հավելավճարները

1. Սահմանադրական դատարանի նախագահին և անդամներին դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար վճարվում է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով:
2. Սահմանադրական դատարանի նախագահին և անդամներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

Հոդված 13. Դատավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները

1. Դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար դատավորին վճարվում է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով:
2. Դատավորը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար՝ սույն օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:
3. Դատավորներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:
4. Դատարանում դատավորների թվի կրճատման կամ օրենքով նախատեսված՝ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացման դեպքում դատավորին ստորադաս դատարանի դատավորի պաշտոնում նշանակելիս նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձը, այդ թվում՝ հավելավճարները, բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքի, պահպանվում են՝ մինչև օրենքով սահմանված կարգով տվյալ պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի չափի հավասարվելը նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձի չափին:

Հոդված 14. Դատախազի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները

1. Դատախազի պաշտոնում աշխատանքային ստաժի համար դատախազին վճարվում է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով:

2. Դատախազը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:

3. Դատախազներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 15. Հատուկ քննչական ծառայության ծառայողի վարձատրությունը

1. Հատուկ քննչական ծառայության պետի և նրա տեղակալի պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի N1 հավելվածով, իսկ հատուկ քննչական ծառայության այլ ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ սույն օրենքի N 2 հավելվածով:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողին վճարվում է հավելավճար՝ հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով:

3. Հատուկ քննչական ծառայության ծառայողը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:

4. Հատուկ քննչական ծառայության ծառայողին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

5. Սույն օրենքի 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածներով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում հատուկ քննչական ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա:

Հոդված 16. Զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրությունը *(դրամական ապահովությունը)*

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների (այսուհետ նաև՝ զինծառայող), քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված համապատասխան հավելվածներով սահմանված՝ նրանց պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով:

2. Պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են N3 հավելվածով, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմնի համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ N4 հավելվածով, ոստիկանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ N5 հավելվածով, Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ N6 հավելվածով, քրեակատարողական ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են N 7 հավելվածով, փրկարար ծառայության ծառայողներինը՝ N 8 հավելվածով:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ, 19-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ մասերով, 20-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերով, 21-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերով, 25-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա: Սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության ծառայողների վրա:

4. Զինծառայողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին կոչման համար հավելավճար չի տրվում:

5. Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, ոստիկանությունում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված կարող են տրվել հավելումներ, որոնց չափերը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների կադրերի ռեզերվում (կադրերի տրամադրության տակ) գտնվելու դեպքում վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

ԳԼՈՒԽ 5

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 17. Դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետների վարձատրությունը

1. Դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև օտարերկրյա պետությունում ծառայողական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետները հավելավճար են ստանում դիվանագիտական աստիճանի և օտար լեզվի իմացության համար: Օտար լեզվի իմացության համար հավելավճարի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

ԳԼՈՒԽ 6
ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Պետական ծառայողների հիմնական աշխատավարձի հաշվարկը

1. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի N 9 հավելվածով սահմանված՝ նրա պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով:

2. Պետական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր ենթախմբի համար նախատեսված է հիմնական աշխատավարձի՝ նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու սանդղակների աղյուսակ, որը ներառում է պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:

3. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է աշխատավարձի մակարդակներից, որոնցից յուրաքանչյուրում հիմնական աշխատավարձի հաշվարկման համար սահմանվում է բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:

Հոդված 19. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձը պաշտոնում նշանակվելիս

1. Առաջին անգամ պետական ծառայության պաշտոնում նշանակված անձը վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող սանդղակի առաջին մակարդակի հիմնական աշխատավարձի չափով (պաշտոնային դրույքաչափով):

2. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կարգով պետական ծառայության ավելի բարձր պաշտոնի նշանակված պետական ծառայողը նոր ենթախմբի սանդղակում իր նախորդ պաշտոնային դրույքաչափին հավասար կամ առավել մոտ դրույքաչափի առկայության դեպքում ստանում է վերջինիս նկատմամբ երկու մակարդակի ավելացում, հակառակ դեպքում՝ նոր ենթախմբի սանդղակի նվազագույն դրույքաչափ:

3. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կարգով պետական ծառայության ավելի ցածր պաշտոնի նշանակված պետական ծառայողը ստանում է աշխատավարձի համապատասխան սանդղակում իր նախորդ պաշտոնային դրույքաչափին հավասար կամ առավել մոտ դրույքաչափ:

4. Վերակազմակերպման պահին վերակազմակերպվող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող պետական ծառայող չհանդիսացող աշխատողներին պետական ծառայության պաշտոններում նշանակելիս պահպանվում է նրանց նախկին պաշտոնային դրույքաչափը,

եթե պետական ծառայության պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը ցածր է նախկին պաշտոնային դրույքաչափից: Սույն մասով սահմանված դեպքում հիմնական աշխատավարձի բնականոն աճը հաշվարկվում է սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության կամ անվանափոխության կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված հատուկ դեպքերում աշխատանքի պայմանների ժամանակավոր փոփոխման կամ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով կամ օրենքով սահմանված դեպքերում ռոտացիայի հիման վրա այլ պաշտոնի փոխադրման դեպքում պահպանվում է պետական ծառայողի նախկին պաշտոնային դրույքաչափը, եթե նոր պաշտոնի պաշտոնային դրույքաչափի մակարդակը ավելի ցածր է: Սույն մասով սահմանված դեպքերում հիմնական աշխատավարձի բնականոն աճը հաշվարկվում է սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով: Սույն կետով սահմանված դրույթը չի գործում, եթե պետական ծառայողը պաշտոնի է նշանակվում արտամրցութային կարգով:

6. Օրենքով նախատեսված դեպքում կադրերի ռեզերվից (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվի) պետական ծառայության ժամանակավորապես թափուր՝ նույն կամ ավելի ցածր ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպքում պետական ծառայողը ստանում է հիմնական աշխատավարձի համապատասխան սանդղակում իր նախորդ պաշտոնային դրույքաչափին հավասար կամ առավել մոտ պաշտոնային դրույքաչափ: Օրենքով նախատեսված դեպքում կադրերի ռեզերվից (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվի) պետական ծառայության ժամանակավորապես թափուր՝ ավելի բարձր ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպքում անձը ստանում է հիմնական աշխատավարձի համապատասխան սանդղակում նվազագույն դրույքաչափ, եթե նոր սանդղակում իր նախորդ դրույքաչափին համապատասխանող գործակից չկա:

Հոդված 20. Հիմնական աշխատավարձի բնականոն աճը

1. Պետական ծառայության միևնույն պաշտոնում պետական ծառայողի անընդմեջ աշխատանքի համար սահմանվում է հիմնական աշխատավարձի՝ պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ՝ աշխատավարձի համապատասխան սանդղակի պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը, եթե պետական ծառայողի միևնույն պաշտոնում աշխատանքի ընդմիջումը չի գերազանցում վեց ամիսը:

2. Պետական ծառայության ստաժի վեց ամսից ավելի ընդմիջման դեպքում պետական ծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

3. Պետական ծառայողի համար պաշտոնային դրույքաչափը հաշվարկելիս 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները գործում են, եթե պետական ծառայության ստաժի ընդմիջումը չի գերազանցում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը, կամ եթե պետական ծառայության ստաժի ընդմիջման ընթացքում պետական ծառայողն անընդմեջ զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանրային ծառայության պաշտոն: Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը հիմնական աշխատավարձի բնականոն աճի մեջ չի հաշվարկվում:

4. Հիմնական աշխատավարձի բնականոն աճը յուրաքանչյուր սանդղակի ներսում իրականացվում է աղյուսակի համաձայն հետևյալ սխեմայով.

1) հիմնական աշխատավարձի 1-4-րդ մակարդակների համար սահմանվում է մեկ մակարդակի ավելացում տարին մեկ անգամ.

2) հիմնական աշխատավարձի 5-7-րդ մակարդակների համար սահմանվում է մեկ մակարդակի ավելացում յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ.

3) հիմնական աշխատավարձի 8-10-րդ մակարդակների համար սահմանվում է մեկ մակարդակի ավելացում յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ.

4) հիմնական աշխատավարձի 11-րդ մակարդակից աշխատավարձը մնում է անփոփոխ:

5. Տվյալ պաշտոնում պետական ծառայողի հիմնական աշխատավարձի բնականոն աճը կիրառվում է պետական ծառայողի հիմնական աշխատավարձի գործող մակարդակի նկատմամբ: Պետական ծառայողների հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացման ժամանակ հաշվի են առնվում նաև նրանց ծառայողական գործունեության գնահատման արդյունքները:

6. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական միավոր ավելացումը, բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից՝ սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան:

Հոդված 21. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի աճի կասեցումը և հիմնական աշխատավարձի իջեցումը

1. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի հիմնական աշխատավարձի բնականոն հերթական միավոր ավելացումը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) կասեցնում է մեկ տարով, եթե՝

1) նախորդ տարվա ընթացքում ներկայացրած հաշվետվություններից մեկի եզրակացությունը բացասական է, կամ

2) նախորդ տարվա երկու կիսամյակների կատարողականների գնահատման արդյունքներից մեկը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կատարողականների գնահատման ցուցանիշից:

2. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի հիմնական աշխատավարձը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իջեցնում է մեկ միավորով, եթե՝

1) նախորդ տարվա ընթացքում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի ներկայացրած երկու կիսամյակային հաշվետվություններն էլ գնահատվել են բացասական եզրակացությամբ, և եթե չի կիրառվում կարգապահական տույժի առավել խիստ միջոց, կամ

2) նախորդ տարվա երկու կիսամյակների կատարողականների գնահատման արդյունքները ցածր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կատարողականների գնահատման ցուցանիշից, և եթե չի կիրառվում կարգապահական տույժի առավել խիստ միջոց:

3. Հայաստանի Հանրապետության օրենքներով, որպես կարգապահական տույժի տեսակներ, կարող են սահմանվել պետական ծառայության պաշտոն զբաղեցնող պետական ծառայողի աշխատավարձի իջեցման այլ դեպքեր:

Հոդված 22. Պետական ծառայողների պարգևատրման աղբյուրները, չափերը և կարգը

1. Պետական ծառայության մարմինների համար պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է միասնական տոկոսային դրույքաչափով:

2. Յուրաքանչյուր մարմնի համար պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է այդ մարմնի պետական ծառայողների՝ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ, որը սահմանվում է հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով:

3. Յուրաքանչյուր մարմնի համար պարգևատրման ֆոնդը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ մարմնի համար նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի առնվազն 10 տոկոսը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի:

4. Պետական ծառայողի պարգևատրման չափը հաշվարկվում է նրա հիմնական աշխատավարձի նկատմամբ:

5. Տվյալ մարմնում կիսամյակային հաշվետվությունների հիման վրա պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից պետական ծառայողի պարգևատրման չափը հաստատում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող անձը՝ հիմք ընդունելով պետական ծառայողի անմիջական ղեկավարի տված ծառայողական գործունեության գնահատման եզրակացությունը:

6. Պետական ծառայողը պարգևատրում չի ստանում, եթե կիսամյակային հաշվետվությունը գնահատվել է բացասական կամ պարգևատրում տալու վերաբերյալ որոշում ընդունելու պահին չի հանդիսանում պետական ծառայող:

7. Կիսամյակային հաշվետվության հիման վրա պարգևատրումը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից առաջին կիսամյակի համար տրվում է մինչև հուլիսի 30-ը, իսկ երկրորդ կիսամյակի համար՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը:

8. Պետական ծառայողի կատարողականի հիման վրա պարգևատրումը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից վճարվում է այն մարմնից, որտեղ պետական ծառայողի կատարողականը գնահատվել է դրական: Պետական ծառայողի կատարողականի հիման վրա պարգևատրման և դրա հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և(կամ) տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

10. Պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի

առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ տարեկան ոչ ավելի քան 3 անգամ:

Գ Լ Ո Ւ Խ 7
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 23. Զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին տրվող դրամական օգնությունը

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական ծառայության ծառայողներին տրվող դրամական օգնության և սոցիալական այլ երաշխիքների տրամադրման հետ կապված և սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են զինծառայողների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Փրկարար ծառայության ծառայողներին և նրանց ընտանիքի անդամին դրամական օգնության տրամադրումն իրականացվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 24. Պետական ծառայողներին *(բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների)* տրվող դրամական օգնության դեպքերը և պայմանները

1. Պետական ծառայողին (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) կարող է տրվել միանվագ դրամական օգնություն հետևյալ դեպքերում.

1) պետական ծառայողի ամուսնության.

2) տարերային աղետի հետևանքով պետական ծառայողին վնաս պատճառելու.

3) պետական ծառայողի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության.

4) պետական ծառայողի ընտանիքի անդամի մահվան:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում միանվագ դրամական օգնությունը պետական ծառայողին կարող է տրվել պետական ծառայողի մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

3. Պետական ծառայողի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամին կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ պետական ծառայողի վերջին պաշտոնի համար սահմանված մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

4. Դրամական օգնությունը կարող է տրվել պետական ծառայողի (նրա մահվան դեպքում ընտանիքի անդամների) դիմումի կամ նրա անմիջական ղեկավարի զեկուցագրի հիման վրա, տվյալ մարմնի աշխատակազմի ղեկավարի կամ օրենքով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի կողմից՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների առկայության դեպքում:

5. Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում պետական ծառայողների համար կարող են սահմանվել դրամական օգնության այլ դեպքեր և պայմաններ:

Հոդված 25. Պետական ծառայողներին (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) տրամադրվող արտոնությունները և փոխհատուցումները

1. Պետական ծառայողներին (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) տրամադրվում են հետևյալ արտոնությունները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական ծառայողների ատեստավորման, վերապատրաստման և պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի ամբողջ ընթացքում պետական ծառայողի աշխատավարձը պահպանվում է.

2) քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայողի համար սահմանվում է աշխատավարձ՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան բարձրագույն խմբի 1-ին ենթախմբի առավելագույն դրույքաչափը.

3) հիմնական արձակուրդային վճարից բացի, պետական ծառայողին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքից ազատվելու դեպքում միանվագ արձակուրդային վճարը տրվում է փաստացի աշխատած ամիսներին համամասնորեն.

4) համապետական, Երևանի ավագանու, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների դեպքում ընտրությունների անցկացման ժամանակահատվածի մեկ ամսվա համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի կենտրոնական ապարատի քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերը կրկնապատկվում են, ընդ որում այդ ժամանակահատվածի համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի կենտրոնական ապարատի քաղաքացիական ծառայողների և մյուս աշխատողների պաշտոնային դրույքաչափերի տարբերությունը նախատեսվում է ընտրությունների կազմակերպման և անցկացման ծախսերում.

5) առանձին ծախսերի փոխհատուցումները (կացարան, համազգեստ, տրանսպորտային միջոցներ և այլն) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

Հոդված 26. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրամադրվող սոցիալական փաթեթը

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և (կամ) նրանց ընտանիքի անմիջական անդամներին առողջապահության ծառայությունների, հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման, ուսման վճարի, Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանգստի ապահովման նպատակով տրամադրվում է սոցիալական փաթեթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

Գ Լ Ո Ւ Խ 8
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հոդված 27. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության կարգը

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա յոթերորդ աշխատանքային օրը:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության և դրամական օգնության, աշխատանքից ազատման, մահվան դեպքերում վարձատրության, աշխատաժամանակի հաշվարկի, արտաժամյա, գիշերային, հանգստյան, տոներին և հիշատակի օրերին կատարված աշխատանքի, պարապուրդի, ինչպես նաև ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում վարձատրության հետ կապված՝ սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով:

3. Աշխատանքից ազատելու դեպքում պետական պաշտոն զբաղեցնող անձին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված արձակման նպաստ չի վճարվում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերի:4. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն տվյալ անձի համաձայնությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում:

5. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում օրենքով սահմանված դեպքում և կարգով պետական ծառայողը ստանում է վարձատրություն:

Հոդված 28. Պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության կարգը

1. Պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից պաշտոն զբաղեցնող անձի) վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխան սանդղակի առաջին մակարդակին համապատասխանող պաշտոնային դրույքաչափով:

Հոդված 29. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության և դրամական օգնության ֆինանսավորման աղբյուրները

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ յուրաքանչյուր մարմնի համար նախատեսված միջոցներից:

2. Պետական ծառայողների միանվագ դրամական օգնության ֆինանսավորումն իրականացվում է աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների խնայողությունների հաշվին:

3. Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներից:

ԳԼՈՒԽ 9
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 30. Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրությունը

1. Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի N 2 հավելվածով:

2. Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող գրասենյակների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման համար հիմք են ընդունվում հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների՝ սույն օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափերը:

ԳԼՈՒԽ 10
ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 31. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենսդրությունը խախտելու համար

1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 11
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 32. Պետական *պաշտոն զբաղեցնող անձանց* աշխատանքի վարձատրության նոր համակարգի ներդրումը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետական պաշտոն զբաղեցնող անձին նշանակվում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափ:

2. Սույն օրենքով սահմանված վարձատրության նոր համակարգի ներդրումը չի կարող հանգեցնել սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձի չափի նվազեցման, բացառությամբ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պաշտոնի փոփոխման և կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվելու դեպքերի: Ընդ որում, սույն մասով նախատեսված պայմանը զինծառայողների, փրկարար ծառայողների համար կիրառելու դեպքում հիմնական աշխատավարձ է համարվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը զինծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող պաշտոնային դրույքաչափի, կոչման դրույքաչափի, ստաժի համար դրույքաչափի, պարենի փոխհատուցման գումարի, քսան օրացուցային տարվա զինվորական ծառայության կամ փրկարար ծառայության ստաժ ունեցող և զինվորական ծառայությունը կամ փրկարար ծառայությունը շարունակող զինծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող ամսական հավելման հանրագումարը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված անձը վարձատրվում է իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը բարձրագույն խմբի 1-ին ենթախմբի համար սահմանված առավելագույն դրույքաչափը:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն զբաղեցնող անձի գործող պաշտոնային դրույքաչափը սույն օրենքով սահմանված՝ տվյալ պետական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափից բարձր լինելու դեպքում պահպանվում է պետական պաշտոն զբաղեցնողի գործող՝ առավել բարձր պաշտոնային դրույքաչափը:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի աճը կասեցվում է մինչև տվյալ պաշտոնում նրա գործող պաշտոնային դրույքաչափին հավասար պաշտոնային դրույքաչափ ստանալու իրավունքի ձեռք բերումը, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձը գերազանցում է սույն օրենքով սահմանված չափերը:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը հիմնական աշխատավարձի 30 տոկոսը գերազանցելու դեպքում լրացուցիչ աշխատավարձի աճը կասեցվում է: Սույն մասով սահմանված դեպքում լրացուցիչ աշխատավարձը կարող է աճել միայն տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի ավելացման դեպքում՝ հիմնական աշխատավարձի 30 տոկոսը չգերազանցելու պայմանով: Սույն մասով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրացուցիչ աշխատավարձի աճի և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, ինչպես նաև քրեակատարողական ծառայողների և փրկարար ծառայության ծառայողների համար սահմանված լրավճարների հետ կապված հարաբերությունների վրա:

7. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերահաշվարկվում են բազային աշխատավարձի և սույն օրենքի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնն ընդգրկող սանդղակի համապատասխան գործակցի միջոցով:

8. Դասային աստիճանի համար սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հավելավճարը դատավորին տրվում է այն դեպքում, երբ նրա պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված վարձատրության նոր համակարգին համապատասխան:

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատարանում դատավորների թվի կրճատման կամ օրենքով նախատեսված՝ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացման դեպքում դատավորին ստորադաս դատարանի դատավորի պաշտոնում նշանակելիս պահպանվում է նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձը, բացառությամբ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարանի նախագահի պաշտոնի համար ստացած հավելավճարների:

10. Աշխատավարձի բնականոն աճի հաշվարկի համար սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին տվյալ պաշտոնում պետական ծառայողի ստաժը հաշվարկվում է՝ հաշվի առնելով տվյալ պաշտոնում պետական ծառայողի աշխատանքի ողջ ժամանակահատվածը:

Հոդված 33. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները գործում են միայն քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական ծառայողների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների նկատմամբ, ընդ որում 2014 թվականի հուլիսի 1-ից քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական ծառայողների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է յուրաքանչյուր մարմնում վերը նշված ծառայողների նախորդ տարվա աշխատավարձի տարեկան ֆոնդի 5 տոկոսի չափով: Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դրույթները գործում են միայն քաղաքացիական, դատական ծառայողների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների նկատմամբ: Պետական բոլոր ծառայողների համար սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի

3-րդ կետով սահմանված դրույթները կգործեն 2015 թվականի հունվարի 1-ից: Պետական բոլոր ծառայողների համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների, սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները կգործեն 2015 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-505-Ն օրենքը, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-409-Ն օրենքը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, պետական պաշտոն զբաղեցնող անձանց և հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերն ենթակա են համապատասխանեցման սույն օրենքով սահմանված դրույթներին: Մինչ այլ նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը, դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքով սահմանված պահանջներին:

5. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների և քրեակատարողական, փրկարար ծառայության ծառայողների պաշտոնների անվանումներն ու պաշտոնների նկարագրերը պետք է համապատասխանեցվեն սույն օրենքի համապատասխանաբար *N4, N5, N6, N7 և N8* հավելվածներով սահմանված դասակարգմանը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասինե, «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Հերթական համարը	առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը,	առաջարկությունը	առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
1	2	3	4	5
1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների				
1	2	3	4	5
1.	ՀՀԿ խմբակցություն Գ. Սահակյան	հավելված 2 աղյուսակի ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ բաժնում	ՀՀ Աժ խմբակցությունների փորձագետների և գործավարների վարձատրության հարցը կարիք ունի օրենսդրական կարգավորման: Նկատի առնելով այն, որ խմբակցության փորձագետների գործառույթները ընդգրկում են տարբեր ոլորտներ, անհրաժեշտ է որպեսզի նրանց վարձատրության չափը համազոր լինի նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությանը: Ուստի առաջարկում ենք Աժ խմբակցությունների փորձագետների և գործավարների համար վարձատրության պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները ներառել ՀՀ Աժ ներկայացված «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հավելվածի ՀՀ Աժ-ն վերաբերող բաժնում՝ նախատեսելով փորձագետների համար 5, իսկ գործավարների համար 2.50 գործակիցներ: Ավելացնել հետևյալ տողերը. ՀՀ Աժ խմբակցության և պատգամավորական խմբի փորձագետ (մասնագետ) 5.00 ՀՀ Աժ խմբակցության և պատգամավորական խմբի գործավար 2.50:	Ընդունվել է մասնակի, ՀՀ Աժ խմբակցության և պատգամավորական խմբի փորձագետի, ՀՀ Աժ պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները ներառվել են Նախագծի Հավելված 2-ում՝ 3.50 գործակցով: ՀՀ Աժ խմբակցության և պատգամավորական խմբի գործավարների և տեխնիկական սպասարկում իրականացնող այլ աշխատողների համար Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված է աշխատավարձի ֆոնդի ձևավորման մեխանիզմ: Միևնույն ժամանակ, Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների և քաղաքացիական աշխատանք կատարողների աշխատավարձերի սահմանման իրավասությունը վերապահված է այդ մարմինների աշխատակազմերի ղեկավարներին:
2.	Ռուզաննա Մուրադյան	Հոդված 2	վերանայել 2-րդ Հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետը՝ առանձնացնելով նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի տեղակալի և քարտուղարի աշխատավարձերը հանձնաժողովի մյուս անդամներից:	Չի ընդունվել: Նշված աշխատանքները ունեն ժամանակավոր բնույթ և գործառնական առումով հիմնականում չեն տարբերվում:
		Հոդված 2-ի 2-րդ կետի 6-րդ ենթակետ	<<հանձնաժողովի նախագահի տեղակալ>> բառերից հետո ավելացնել <<հանձնաժողովի քարտուղար>> բառերը կամ ձևակերպել հետևյալ խմբագրությամբ <<հանձնաժողովի բոլոր անդամները վարձատրվում են ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո	Չի ընդունվել: Նշված աշխատանքները ունեն ժամանակավոր բնույթ և գործառնական առումով հիմնականում չեն տարբերվում:
		Հավելված 1-ի աղյուսակ	վերանայել ՀՀ Աժ պատգամավորի աշխատավարձի 10.00 գործակիցը և այն դարձնել ՀՀ նախարարի	Չի ընդունվել:

			գործակցին համարժեք՝ հաշվի առնելով նրանց վրա դրված լիազորություններն ու պատասխանատվությունը	
			վերանայել ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականների աշխատավարձը	Ընդունվել է: ՀՀ ԱԺ պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները ներառվել են Նախագծի Հավելված 2-ում՝ 3.50 գործակցով:
3.	Կարինե Աճեմյան	Հավելված 7 (հղումը սխալ է, իրականում հավելված 1)	<<Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների հանձնաժողովների ծառայությունների, խորհուրդների անդամների>> 7.00 գործակիցը փոխարինել 7.50 գործակցով	Ընդունվել է:
4.	Կարինե Աճեմյան և Թևան Պողոսյան	Հոդված 11	<<հինգ>> բառը փոխարինել <<տաս>> բառով	Ընդունվել է մասնակի: Նախագծի 11-րդ հոդվածով սահմանվել է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար յուրաքանչյուր տարի նախատեսվում են միջոցներ յուրաքանչյուր պատգամավորի համար 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով»:
		Հավելված 2-ի աղյուսակ	<<ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի օգնական>> տողից հետո ավելացնել նոր տող՝ բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող անձանց թվում ավելացնելով ՀՀ ԱԺ պատգամավորի օգնականի հաստիքը, որի համար սահմանել 4.50 գործակից	Ընդունվել է մասնակի, ՀՀ ԱԺ պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները ներառվել են Նախագծի Հավելված 2-ում՝ 3.50 գործակցով:
5.	Արմեն Ռուստամյան, Աղվան Վարդանյան Արծվիկ Մինասյան	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի գ. ենթակետով նախատեսվել է, որ սույն օրենքի գործողության ոլորտը չի տարածվում ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների վրա: Առաջարկվում է նախագծի գործողության ոլորտում ներառել ՀՀ կենտրոնական բանկին:	Չի ընդունվել:
		Հոդված 2	Նախագծով սահմանված է 2-րդ հոդվածի 4-րդ մասում թվարկված մարմինների աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ընդհանուր ամսական աշխատավարձի ֆոնդի հաշվարկման կարգը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում թվարկված մարմինների աշխատակազմերում աշխատող նույն անձանց ընդհանուր ամսական աշխատավարձի ֆոնդի հաշվարկման կարգը չի	Չի ընդունվել: Պետական կառավարման մյուս մարմինները, նկատի ունենալով միևնույն տարածքում դրանց տեղակայման հանգամաքը, ինչպես նաև այս պարագայում տեխնիկական սպասարկում իրականացնողների աշխատանքի կազմակերպման համար գործող մասշտաբի արդյունքը և ճկունության ապահովման անհրաժեշտությունը, հաշվարկում են նշված

			սահմանված և այն վերապահված է ՀՀ կառավարությանը: Առաջարկվում է նշված անձանց ընդհանուր ամսական աշխատավարձի ֆոնդի հաշվարկման կարգը ևս սահմանել նախագծով:	խմբի աշխատողների աշխատավարձի ֆոնդը, որը ներառվում է այդ մարմինների պահպանման ծախսերում, իսկ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների դրույքաչափերը սահմանում է ՀՀ կառավարությունը:
			Սահմանել <<հատուկ առաջադրանք>> հասկացությունը, քանի որ դրա կատարման համար նախատեսվում է վճարել պարգևատրում	Ընդունվել է մասնակի: Հատուկ առաջադրանքները ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ գործնականում կարող են ունենալ դրսևորման տարբեր ձևեր, որոնք ամբողջությամբ հնարավոր չէ նախատեսել Նախագծով: Միևնույն ժամանակ, Նախագծի 22-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանափակվել է հատուկ առաջադրանքների կատարման համար նախատեսվող պարգևատրումների քանակը տարեկան կտրվածքով:
		Հոդված 6	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը, միաժամանակ նույն հոդվածի 3-5-րդ մասերով նախատեսվել են նշված սահմանափակման բացառությունները: Նախագծում նշված սահմանափակումն ավելորդ անգամ ներկայացված է ըստ առանձին պաշտոնի խմբերի, հավելավճարների և հավելումների: Առաջարկվում է նախագծից հանել 7-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ հոդվածի 5-րդ, 12-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 3-րդ, 14-րդ հոդվածի 3-րդ, 15-րդ հոդվածի 4-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը:	Չի ընդունվել: Նշված դրույթի տարբեր հոդվածներում ներառումը ունի հստակեցման բնույթ և նպատակ է հետապնդում իրավակիրառական պրակտիկայում խուսափել տարընթերցումներից:
		Հոդված 11	11-րդ հոդվածի 1-ին մասում <<5 տոկոսի >> բառերը փոխարինել <<10 տոկոսի>> բառերով	Ընդունվել է մասնակի: Նախագծի 11-րդ հոդվածով սահմանվել է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար յուրաքանչյուր տարի նախատեսվում են միջոցներ յուրաքանչյուր պատգամավորի համար 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով»:
		Հոդված 17	17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ	Չի ընդունվել: Հայաստանի

			դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետների պաշտոնային դրույքաչափը, ինչպես նաև օտարերկրյա պետությունում ծառայողական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափը և կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Առաջարկվում է այն ևս սահմանել նախագծով:	Հանրապետության տարածքում դիվանագետների վարձատրության համար գործում է միասնական կարգավորում, իսկ օտարերկրյա պետություններում ծառայող դիվանագետների աշխատանքի առանձնահատկությունները և պայմանները խիստ բազմազան են, արագ փոփոխվող, հետևաբար վերջիններիս համար օրենքով դրույքաչափերի սահմանումը նպատակահարմար չէ:
		Հավելված 6	Նախագծի 6-րդ հավելվածով պետական ծառայության միևնույն պաշտոնում պետական ծառայողի անընդմեջ աշխատանքի համար սահմանվել է 11 մակարդակներ և դրանց համապատասխան գործակիցներ: Յուրաքանչյուր իրար հաջորդող մակարդակների գործակիցների տարբերությունը մեկ միավոր չի կազմում: Առաջարկվում է նախագծի 20-րդ հոդվածի 4-րդ մասի 1-3-րդ կետերից հանել <<մեկ միավոր>> բառերը: 21-րդ հոդվածի 2-րդ մասում <<միավորով>> բառը փոխարինել <<մակարդակով>> բառով:	Ընդունվել է:
		Հոդված 22	22-րդ հոդվածի 1-ին մասի վերջին տողում <<աշխատավարձի>> բառից հետո ավելացնել <<տարեկան>> բառը	Ընդունվել է:
		Հավելված 1-ի աղյուսակ	Հավելված 1-ի աղյուսակում ՀՀ ԱԺ-ի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ տողի գործակիցը սյունակում <<10.50>> թիվը փոխարինել <<11.50>> թվով, իսկ ՀՀ ԱԺ-ի պատգամավորներ տողում՝ <<10.00>> թիվը փոխարինել <<11.00>> թվով	Չի ընդունվել:
		Հավելված 2-ի աղյուսակ	Հավելված 2-ի աղյուսակի ՀՀ ԱԺ-ի աշխատակազմ բաժնում ավելացնել հետևյալ տողերը. <<<ՀՀ ԱԺ խմբակցության և պատգամավորական խմբի փորձագետ (մասնագետ) 5.00 ՀՀ ԱԺ խմբակցության և պատգամավորական խմբի գործավար 2.50>>:	Ընդունվել է մասնակի: ՀՀ ԱԺ խմբակցության և պատգամավորական խմբի փորձագետի, ՀՀ ԱԺ պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները ներառվել են Նախագծի Հավելված 2-ում՝ 3.50 գործակցով:
6.	Հայկ Բաբուխանյան	Հավելված 1-ի աղյուսակ	<<<ՀՀ մարդու իրավունքների պաշտպան>> տողի դիմաց գործակիցը սահմանել 10.00	Չի ընդունվել:
		Հավելված 2-ի աղյուսակ	<<<ՀՀ ԱԺ-ի աշխատակազմ>> բաժնում ավելացնել << ՀՀ ԱԺ պատգամավորի օգնական>> պաշտոնի անվանումը դրա դիմաց սահմանելով 3.50 գործակից:	Ընդունվել է:
7.	Զարուհի Փոստանջյան	Հոդված 9	Առաջարկվում է հանել 9-րդ հոդվածը	Չի ընդունվել:
		Հավելված 2-ի	Առաջարկվում է ՀՀ ԱԺ-ի աշխատակազմ բաժնում	Ընդունվել է մասնակի: ՀՀ ԱԺ խմբակցության

		աղյուսակ	ավելացնել հետևյալը. <<ՀՀ ԱԺ խմբակցության և պատգամավորական խմբի փորձագետ (մասնագետ) 5.00 ՀՀ ԱԺ խմբակցության և պատգամավորական խմբի գործավար 2.50>>	և պատգամավորական խմբի փորձագետի, ՀՀ ԱԺ պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները ներառվել են Նախագծի Հավելված 2-ում՝ 3.50 գործակցով:
8.	Հակոբ Հակոբյան Ա. Մխիթարյան Վ. Մարկոսյան Ռ. Հովսեփյան	Հավելված 1-ի աղյուսակ	«ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր» տողում 10.00 գործակիցը դարձնել 11.00:	Չի ընդունվել:
			Նախագծի 1-ին հավելվածում ավելացնել «ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար» տող և գործակից սյունակում լրացնել 10.50	Չի ընդունվել: Նախագծում քննարկվում են միայն առկա պաշտոնները: Հավելված 1-ից հանվել է «ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար» պաշտոնը՝ նկատի ունենալով, որ այդ պաշտոնի համար համապատասխան գործակիցը սահմանված է «Նախարար» տողում՝ 12 գործակցով:
			օրենքի նախագծի 1-ին հավելվածում «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար» տողում 10.00 գործակիցը դարձնել 10.50	Չի ընդունվել:
			օրենքի նախագծի 1-ին հավելվածում «ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ» տողում 10.50 գործակիցը դարձնել 11.50	Չի ընդունվել:
			օրենքի նախագծի 1-ին հավելվածում «ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի անդամ» տողում 8.00 գործակիցը դարձնել 8.50	Չի ընդունվել:
			Օրենքի նախագծի 1-ին հավելվածում «ՀՀ օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) անդամներ» տողում 7.00 գործակիցը դարձնել 7.50:	Ընդունվել է:
			Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել «դրամական օգնություն» հասկացությունը	Ընդունվել է:
			Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասում «հավելում» և «հավելավճար» հասկացությունները սահմանել 2)ա և 2)բ ենթակետերով, քանի որ դրանք հանդիսանում են լրացուցիչ աշխատավարձի բաղադրիչներ	Ընդունվել է:
			Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի «հավելավճար» հասկացության մեջ թվարկված պայմաններից հանել «կոչումներ» բառը	Ընդունվել է: Բացառություն է սահմանվել միայն հարկային և մաքսային ծառայողների համար՝ նկատի ունենալով, որ այդ ծառայողների համար դասային աստիճաններ սահմանված չեն: Նրանց

				համար գործող օրենսդրությամբ սահմանված են դասային կոչումներ:
			Նախագծի 11-րդ հոդվածի առաջին մասում նախատեսված «աշխատավարձի հինգ տոկոսի չափով» միջոցների բաշխման կարգը սահմանել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով: Ելնելով դրանից, նախագծերի փաթեթին ավելացնել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:	Ընդունվել է մասնակի: Նախագծի 11-րդ հոդվածով սահմանվել է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար յուրաքանչյուր տարի նախատեսվում են միջոցներ յուրաքանչյուր պատգամավորի համար 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով»: Միևնույն ժամանակ, պատրաստ ենք քննարկելու հեղինակների կողմից ներկայացվող նախագիծը՝ համապատասխան լուծումներով:
			Նախագծի 17-րդ հոդվածի առաջին մասում դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերը սահմանել սույն օրենքով և հաշվի առնելով դիվանագիտական պաշտոնների բազմազանությունը և դիվանագիտական ծառայության երկրի առանձնահատկությունը՝ նույն հոդվածի 2-րդ մասում՝ դիվանագիտական պաշտոն զբաղեցնող դիվանագետների դիվանագիտական աստիճանի և օտար լեզվի իմացության համար հավելավճարների չափը սահմանել ՀՀ կառավարության կողմից:	Չի ընդունվել: Հայաստանի Հանրապետության տարածքում դիվանագետների վարձատրության համար գործում է միասնական կարգավորում, իսկ օտարերկրյա պետություններում ծառայող դիվանագետների աշխատանքի առանձնահատկությունները և պայմանները խիստ բազմազան են, արագ փոփոխվող, հետևաբար վերջիններիս համար օրենքով դրույքաչափերի սահմանումը նպատակահարմար չէ:
			Նախագծում «միավոր» բառը փոխարինել «մակարդակ» բառով	Ընդունվել է:
			Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասի վերջում հանել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերի» բառերը	Ընդունվել է:
			Նախագծի 22-րդ հոդվածի 11-րդ մասում հանել «հատուկ առաջադրանքների» բառերը, իսկ «պարգևատրում» բառից առաջ լրացնել «տարեկան» բառը կամ սահանել թե պարգևատրումը տարեկան ինչ պարբերականությամբ կարող է լինել:	Ընդունվել է մասնակի: Նախագծի 22-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանափակվել է հատուկ առաջադրանքների կատարման համար նախատեսվող պարգևատրումների քանակը տարեկան կտրվածքով:
			Օրենքի նախագծի 25-րդ հոդվածի վերնագրում հստակեցնել «այլ ծառայողներ» հասկացությունը կամ փոխել վերնագիրը	Ընդունվել է:
			Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի կիրառության	Սոց փաթեթի հետ կապված հիմնահարցերը

			ժամկետները համապատասխանեցնել սույն օրենքի շահառուների շրջանակի հետ:	ներկայումս գտնվում են կատարելագործման փուլում. մասնավորապես՝ ճշգրտվում են մեխանիզմները, շահառուների շրջանակը, ծառայությունների մատուցման սկզբունքներն ու դրանց ցանկը:
			Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասում «մինչև հաջորդ ամսվա յոթերորդ աշխատանքային օրը» բառերը փոխարինել «մինչև հաջորդ ամսվա տասնհինգերորդ աշխատանքային օրը» բառերով կամ «օրենքով սահմանված կարգով» բառերով	Չի ընդունվել: Առաջարկվող փոփոխությունը կվատթարացնի պետական ծառայողների վարձատրության պայմանները. իրավակիրառական պրակտիկայում գործող այս նորմը խնդիրներ չի առաջացրել:
			Քննարկել մանկավարժների վարձատրության պաշտոնային դրույքաչափերի հաշվարկային գործակիցները սույն օրենքով սահմանելու մասին հարցը:	Չի ընդունվել: Մանկավարժների աշխատավարձերի սահմանման մեխանիզմը՝ համապատասխան գործակցով ներառված է 2014թ. ՀՀ պետական բյուջեի նախագծում և 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Միաժամանակ, պատրաստ ենք քննարկելու այս հարցի վերաբերյալ կոնկրետ առաջարկներ:
			Քննարկել բժիշկների վարձատրության պաշտոնային դրույքաչափերի հաշվարկային գործակիցները սույն օրենքով սահմանելու մասին հարցը:	Չի ընդունվել: Բժիշկների աշխատավարձերի սահմանման մեխանիզմը՝ համապատասխան գործակցով ներառված է 2014թ. ՀՀ պետական բյուջեի նախագծում և 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Միաժամանակ, պատրաստ ենք քննարկելու այս հարցի վերաբերյալ կոնկրետ առաջարկներ:
			«ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում ավելացնել դրույթ՝ «Դատավորի վարձատրությունը չի կարող պակասեցվել:»	Չի ընդունվել: Նախագծի 32-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերով նախատեսված է, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում դատավորների, առկա աշխատավարձերը չեն նվազելու նախագծի ընդունումից հետո:
			«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «2014 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինել «2014 թվականի հունվարի 1-ից» բառերով: Հիմնավորում. առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ 2014 թվականի հունվարի 1-ից սկսելու է գործել «Պարտադիր կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի աշխատավարձից 5% կուտակային	Չի ընդունվել: Առաջարկության ընդունումը կառաջացնի ֆինանսական և բյուջետային խնդիրներ: Առավել ծանր ֆինանսական վիճակում կհայտնվեն տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց աշխատակիցների գերակշիռ մասը ստանում է նվազագույն աշխատավարձին մոտ աշխատավարձ:

			վճարներ կատարելու վերաբերյալ դրույթը և դրանով պայմանավորված նկատվելու են աշխատավարձերի նվազեցումներ: Առաջարկությունն ընդունվելու դեպքում՝ հնարավոր կլինի խուսափել ցածր աշխատավարձ ստացողների աշխատավարձերի նվազեցումներից:	
9.	Կորյուն Նահապետյան	Հավելված 1, Հավելված 3	ա) ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները սահմանել 18.00, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամի գործակիցը՝ 15.50, ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի դատավորի գործակիցը՝ 15.00, վերաքննիչ դատարանի դատավորի, մասնագիտացված դատարանի դատավորի գործակիցը՝ 13.00, ընդհանուր իրավասության դատարանի դատավորի գործակիցը՝ 11.00: ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի նախագահի, վերաքննիչ դատարանի նախագահի, մասնագիտացված դատարանի նախագահի, ընդհանուր իրավասության դատարանի նախագահի գործակիցները սահմանել համապատասխան դատարանների գործակիցների 0.5 գործակցով ավելի: բ) ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալի գործակիցը սահմանել 11.50, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի գործակիցը՝ 10.50: Այդ կապակցությամբ փոփոխություններ կատարել թիվ 1 և թիվ 3 Հավելվածներում: Միաժամանակ համամասնորեն 0.5 գործակցով ավելացնել զինվորական ծառայության այլ պաշտոնների գործակիցները: գ) ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողովի նախագահի տեղակալի գործակիցը սահմանել 11.00, Ազգային ժողովի պատգամավորինը՝ 10.50: դ) ՀՀ Ազգային ժողովի խմբակցության ղեկավարի պաշտոնը ներառել բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող անձանց պաշտոնների ցանկում և այդ պաշտոնի համար սահմանել 11.00 գործակից:	Չի ընդունվել: Չի ընդունվել: Չի ընդունվել: Չի ընդունվել:
		Հոդված 11	Սահմանել փոխհատուցման այլ չափ՝ մինչև 2017 թվականի հունվարի 10-ը՝ պատգամավորների աշխատավարձի ֆոնդի 15 տոկոս, իսկ 2017թ.«ի	Ընդունվել է մասնակի: Նախագծի 11-րդ հոդվածով սահմանվել է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի

			հունվարի 1-ից՝ 30 տոկոս:	պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար յուրաքանչյուր տարի նախատեսվում են միջոցներ յուրաքանչյուր պատգամավորի համար 50000 դրամի չափով, որոնց բաշխման կարգը սահմանվում է օրենքով»:
		Հավելված 1 Հավելված 2	Հատուկ քննչական ծառայության պետի և Պետական պահպանության ծառայության պետի պաշտոնները ներառել բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող անձանց պաշտոնների ցանկում:	Ընդունվել է:
		Հավելված 2	Հանել ՀՀ ԱԺ նախագահի գլխավոր խորհրդական, ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական, ՀՀ ԱԺ նախագահի օգնական, ՀՀ վարչապետի խորհրդական, ՀՀ վարչապետի ավագ օգնական, ՀՀ վարչապետի օգնական տողերը, քանի որ նշված պաշտոնները ներառված են Հավելված 1-ում:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Հոդված 2	6-րդ մասում «աշխատավարձի» բառից հետո լրացնել «անվանական» բառը	Ընդունվել է:
		Հոդված 3	«Հավելումներ» հասկացության մեջ լրացնել «զինվորական, փրկարար ծառայության առանձնահատկություններով պայմանավորված» բառերը:	Ընդունվել է:
		Հոդված 7	3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կոչման համար հավելավճարը տրվում է միայն հարկային և մաքսային ծառայողներին, ընդ որում հավելավճարը տրվում է միայն առավել բարձր հավելավճար նախատեսող կոչման համար:»:	Ընդունվել է:
		Հադված 8	1-ին մասում «բարձրլեռնային» բառից հետո լրացնել «սահմանամերձ» բառը, իսկ 2-րդ մասից հանել «աշխարհագրական միջավայրի» բառերը. 2-րդ մասից հանել «ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար» բառերը. 3-րդ մասում «տրամադրման կարգն ու չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «չեն տրվում» բառերով:	Ընդունվել է:
		Հոդված 16	Վերնագիրը լրացնել «(դրամական ապահովություն)» բառերով 2-րդ մասը «N3 հավելվածով» բառերից հետո լրացնել «ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմնի համակարգերում զինվորական	Ընդունվել է:

			ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ N4 հավելվածով, ոստիկանության հանրապետական գործադիր մարմնի համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ N 5 հավելվածով, Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ N6 հավելվածով, քրեակատարողական ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են N 7 հավելվածով, փրկարար ծառայության ծառայողներինը՝ N 8 հավելվածով» բառերով, 4-րդ մասում «հետ կապված վարձատրության առանձնահատկությունները» բառերը փոխարինել «առանձնահատկություններով պայմանավորված հավելումների չափերը և վճարման կարգը» բառերով:	
		Հոդված 18	«6» թիվը փոխարինել «9» թվով:	Ընդունվել է:
		Հոդված 19	2-րդ մասը «հավասար» բառից հետո լրացնել «կամ առավել մոտ» բառերով: 5-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Սույն կետով սահմանված դրույթը չի գործում, եթե պետական ծառայողը պաշտոնի է նշանակվում արտամրցութային կարգով:»	Ընդունվել է:
		Հոդված 20	3-րդ մասում «համայնքային» բառը փոխարինել «հանրային» բառով:	Ընդունվել է:
		Հոդված 22	6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տվյալ մարմնում կիսամյակային հաշվետվությունների հիման վրա պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից պետական ծառայողի պարգևատրման չափը հաստատում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող անձը՝ հիմք ընդունելով պետական ծառայողի անմիջական ղեկավարի տված ծառայողական գործունեության գնահատման եզրակացությունը», 11-րդ մասը լրացնել «տարեկան ոչ ավելի քան 3 անգամ» բառերով:	Ընդունվել է:
		Հոդված 26	«Առողջության ապահովագրություն» բառերը փոխարինել «առողջության պաշտպանության ծառայությունների» բառերով:	Ընդունվել է:
		Հոդված 27	Լրացնել հետևյալ բովանդակության 3-րդ մաս. «3.Աշխատանքից ազատելու դեպքում պետական	Ընդունվել է:

			պաշտոն զբաղեցնող անձին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված արձակման նպաստ չի վճարվում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերի:»:	
		Հոդված 31	«պետական ծառայող» բառերը փոխարինել «պետական պաշտոն զբաղեցնող անձ» բառերով:	Ընդունվել է:
		Հոդված 32	Վերնագրում «պետական ծառայող» բառերը փոխարինել «պետական պաշտոն զբաղեցնող անձ» բառերով, 2-րդ մասում «զինծառայողներին տրվող պաշտոնային դրույքաչափի, զինվորական կոչման դրույքաչափի, զինծառայողի ստաժի համար դրույքաչափի, պարենի փոխհատուցման գումարի, քսան օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող և զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողներին» բառերը փոխարինել «զինծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող պաշտոնային դրույքաչափի, կոչման դրույքաչափի, ստաժի համար դրույքաչափի, պարենի փոխհատուցման գումարի, քսան օրացուցային տարվա զինվորական ծառայության կամ փրկարար ծառայության ստաժ ունեցող և զինվորական ծառայությունը կամ փրկարար ծառայությունը շարունակող զինծառայողներին, փրկարար ծառայողներին» բառերով. 4-րդ մասում «զբաղեցնող անձի» բառերը փոխարինել «համար նախատեսված» բառերով, «ծառայող» բառը՝ «պաշտոն զբաղեցնող» բառերով:	Ընդունվել է:
		Հոդված 33	2-րդ մասում «յուրաքանչյուր մարմնի համար կկազմի տվյալ մարմնի պետական բյուջեով տվյալ մարմնի համար նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի 5 տոկոսը» բառերը փոխարինել «հաշվարկվում է յուրաքանչյուր մարմնում վերը նշված ծառայողների նախորդ տարվա աշխատավարձի տարեկան ֆոնդի 5 տոկոսի չափով:» բառերով: 5-րդ մասում «N4 և N5» թվերը փոխարինել «N4, N5, N6, N7 և N8 » թվերով:	Ընդունվել է:
		Հավելված 1	Հավելվածում կատարել գործակիցների հետևյալ փոփոխությունները.	Ընդունվել է:

			ՀՀ փոխվարչապետ՝ 15.50 ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի նախագահ՝ 12.00 Վերաքննիչ դատարանի նախագահ՝ 11.50 ՀՀ առաջին ատյանի դատարանի նախագահ՝ 11.00 ՀՀ վարչական դատարանի նախագահ՝ 11.00 ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ 12.00, առաջին տեղակալ՝ 10.00, տեղակալ՝ 8.50 ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ՝ 12.00 ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ՝ 11.00, պետի առաջին տեղակալ՝ 9.50, տեղակալ՝ 8.50 Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ՝ 7.50 ՀՀ ԿԱ պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալ՝ 7.50	
		Հավելված 2	Հավելվածը լրացնել Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների պաշտոններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների տեղակալների օգնականների պաշտոններով՝ համապատասխան գործակիցներով:	Ընդունվել է:
«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների				
1	2	3	4	5
1	ՀՀԿ խմբակցություն Գ. Սահակյան	հոդված 1	ՀՀ Ազգային ժողովի խմբակցությունները «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով ունեն փորձագետների և գործավարների հաստիքներ: ՀՀ Աժ թվով 6 խմբակցությունների փորձագետների ընդհանուր թիվը 20 է, իսկ գործավարներինը՝ 6: «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված է, որ Աժ խմբակցությունների փորձագետների աշխատանքային ստաժը համարվում է պետական կառավարման ոլորտի ստաժ: Այսինքն նրանք ըստ էության պետք է համարվեն հանրային ծառայողներ: Մինչդեռ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում այս պաշտոնները նշված չեն: Այս	Ընդունվել է:

			բացթողումը վերացնելու համար առաջարկվում է համապատասխան փոփոխություն կատարել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի 7- րդ մասում: «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականների և խորհրդականների պաշտոնները» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների և պատգամավորական խմբերի փորձագետները (մասնագետները)» բառերը:	
2.	Կարինե Աճեմյան և Թևան Պողոսյան	Հոդված 1	Առաջարկվում է Հոդված 1-ում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ. <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասում << ՀՀ նախագահի, ՀՀ ԱԺ նախագահի և նրա տեղակալների, ՀՀ վարչապետի խարհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարների և ռեֆերենտների պաշտոնները,>> բառերից հետո ավելացնել << ՀՀ ԱԺ պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները>> բառերը>>:	Ընդունվել է:
3.	Արմեն Ռուստամյան, Աղվան Վարդանյան Արծվիկ Մինասյան	Հոդված 1	1-ին հոդվածում ավելացնել հետևյալ պարբերությունը. <<մամուլի քարտուղարների և ռեֆերենտների>> բառերից հետո լրացնել <<, ՀՀ ԱԺ խմբակցությունների և պատգամավորական խմբերի փորձագետների (մասնագետների)>> բառերով:	Ընդունվել է:
4.	Կորյուն Նահապետյան		Հատուկ քննչական ծառայության պետի և Պետական պահպանության ծառայության պետի պաշտոնները ներառել բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող անձանց պաշտոնների ցանկում:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Հոդված 2	1-ին կետը լրացնել հետևյալ պարբերությամբ. «կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը և նրա տեղակալները, քրեակատարողական ծառայության պետը և նրա տեղակալները, փրկարար ծառայության պետը և նրա տեղակալները, դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը և նրա տեղակալները» բառերով, իսկ «Հանրապետության Նախագահի	Ընդունվել է:

			խորհրդականները և օգնականները» բառերից հետո լրացնել «մամուլի քարտուղարը» բառերով, հանել «կառավարության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները» բառերը. 2-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ. «Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի» բառերից հետո լրացնել «հատուկ քննչական ծառայության պետի» բառերով, «Հանրապետության Նախագահի խորհրդականների և օգնականների» բառերից հետո լրացնել «, մամուլի քարտուղարի» բառերով, «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի համար՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության պետը, քրեակատարողական ծառայության պետի, դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի համար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, փրկարար ծառայության պետի համար՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի տեղակալի համար՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը, քրեակատարողական ծառայության պետի տեղակալի համար՝ քրեակատարողական ծառայության պետը, դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի համար՝ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը, փրկարար ծառայության պետի տեղակալի համար՝ փրկարար ծառայության պետը» բառերով, հանել «կառավարության աշխատակազմի ղեկավարի, կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալների համար՝ կառավարության աշխատակազմի ղեկավարը» բառերը:	